ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2024 թվականի N 4974

## ՖԱ ՎԱՍՊՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով, հիմք ընդունելով սույն թվականի նոյեմբերի 28-ի N 4 արձանագրությունը և հաշվի առնելով հետևյալը.

Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների 2025 թվականի կարիքների համար սույն թվականի նոյեմբերի 08-ին հայտարարված ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգի շրջանակում 3-րդ/կարտոֆիլ/, 4-րդ/կաղամբ/, 6-րդ/վարունգ/ և 14-րդ/խնձոր/ չափաբաժինների համար ՖԱ Վասպուր Ասատրյանի կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ: Հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ ՖԱ Վասպուր Ասատրյանի կողմից նշված չափաբաժինների համար ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել ՖԱ Վասպուր Ասատրյանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (ներառյալ 2024 թվականի նոյեմբերի 26-ը) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Օրենքով սահմանված ժամկետում ՖԱ Վասպուր Ասատրյանի կողմից չեն կցվել e-AUCTION համակարգ փաստաթղթերի շտկված տարբերակները: Արդյունքում գնահատող հանձնաժողովը ՖԱ Վասպուր Ասատրյանի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՖԱ Վասպուր Ասատրյանը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, հետևաբար այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ ՖԱ Վասպուր Ասատրյանի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 10
ք. Աբովյան